



# «ՉԱՇԽԱՏՈՂ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՃԹՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### «ՎԱՐԴԱՆԻ ԶԱՐԹՈՆՔԸ» ՍՊԸ, ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՍՈՏԻ-ԲԻՆԱՅԻ ՈՍԿԻ-ԲԱԶՄԱՄԵՏԱՂԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

*Սույն հաշվետվությունը պատրաստվել է «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից իրականացվող «Չաշխատող հանքարդյունաբերական ընկերությունների պատասխանատվությունն ԱՃԹՆ գործընթացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID) աջակցությամբ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում:*

## 1. Ընդհանուր տեղեկատվություն հանքավայրի, Ընկերության և ազդակիր համայնքների վերաբերյալ

«Վարդանի գարթոնքը» ՍՊԸ-ն ՀՀ Վայոց ձորի մարզի Սոֆի-բինայի ոսկի-բազմամետաղային հանքավայրի ՇԱԹՎ-29/239 թույլտվությունն ստացել է 17.08.2012թ.: Առ 2020 թվականը Ընկերությունը հանքավայրը չի շահագործել:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 07.08.2020 թվականի թիվ 1075-Ա հրամանով դադարեցվել է «Վարդանի գարթոնքը» ՍՊԸ-ի ընդերքօգտագործման իրավունքը: Նույն հրամանով ուժը կորցված են ճանաչվել 27.08.2012թ. թիվ ՇԱԹՎ-29/239 օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունը և լեռնահատկացման թիվ ԱՎ-239 ակտը, ինչպես նաև լուծվել է 27.09.2012թ. օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-239 պայմանագիրը: Հրամանի համար հիմք են հանդիսացել հետևյալ հանգամանքները՝

1. Շահագործման թույլտվություն ստանալուց ի վեր Ընկերությունն արդյունահանման աշխատանքներ մինչ օրս չի իրականացրել /չի ապահովվել Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքով սահմանվող ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը, Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին 6-րդ մաս/:
2. Չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը:
3. Չի ապահովել ընդերքօգտագործման պայմանագրային պարտավորությունների կատարումը:

N 1075-Ա 07.08.2020թ. հրամանն Ընկերությունը բողոքարկել է վարչական դատարանում/գործ ՎԴ/8035/05/20/: Վարչական դատարանը մերժել է Ընկերության հայցադիմումը: Ընկերությունը դիմել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարան: 2021թ-ի ապրիլի 12-ի դրությամբ դատարանը հայցն ընդունել է վարույթ: ՏԿԵ նախարարության պաշտոնական կայքում<sup>1</sup> 2021թ-ի մարտի 15-ի դրությամբ առկա «Մետաղական օգտակար հանածոների արդյունահանման մասով գործունեության վերաբերյալ տեղեկատվության» մեջ որպես հանքավայրի շահագործման իրավունքի կրող «Վարդանի գարթոնքը» ՍՊԸ-ն չի նշվում:

ՀՀ սնանանկության դատարանի 22.07.2019թ. վճռով «Վարդանի գարթոնքը» ՍՊԸ-ն /ք. Երևան, Եկմայան 6/65, գր. համար 79.110.00234, գր. ամսաթիվ 14.08.2001թ., ՀՎՀՀ 09414399/ ճանաչվել է սնանկ<sup>2</sup>: 2020թ-ի հուլիսի 24-ի «Վարդանի Զարթոնքը» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը համարվել ֆինանսապես առողջացած և ընկերությանը թույլատրվել է շարունակել իր գործունեությունը:

Ընկերությունը մինչև 2020 թվականը չի ունեցել լեռնահատկացման ակտում ներառված՝ Զառիթափ համայնքի 76,6 հա տարածքով հողամասի նկատմամբ օգտագործման իրավունք: 2020 թվականի հունվարի 22-ին հողամասի վարձակալի հետ կնքել է ենթավարձակալության պայմանագիր: Վերոհիշյալ վարձակալը 25 տարով ունի

<sup>1</sup> <http://www.mtad.am/hy/mtad27.12/>

<sup>2</sup> <https://www.azdarar.am/announcements/cat/278/00531662/>

ընդամենը 25 հա գյուղատնտեսական նպատակով հողի վարձակալության պայմանագիր: Նույնիսկ այս դեպքում 51,6 հա տարածքի վարձակալության պայմանագիրը բացակայում է: Էլ չի խոսվում հողի նպատակային օգտագործման նշանակության չփոփոխված լինելու հանգամանքի մասին:

«Վարդանի գարթոնքը» ՄՊԸ-ի շահագործման ՇԱԹՎ-29/239 թույլտվությունը տրվել էր 17.08.2012թ. մինչև 03.12.2026թ. ժամկետով: 27.09.2012թ. կնքված ՊՎ-239 ընդերքօգտագործման պայմանագրում 2015թ. մարտի 6-ին կատարվել են փոփոխություններ՝ կապված հանքավայրի նախապատրաստման աշխատանքների ժամկետների և ներդրումների ծավալների և ժամկետների հետ: Ըստ այդ փոփոխության՝ ներդրումների չափը պետք է կազմեր 346,805 մլն. դրամ: Հանքաքարի արդյունահանման տարեկան թույլատրված ծավալը սահմանվել է 10,0 հազ.տ: Հանքավայրի պաշարները կազմում են՝ ըստ C<sub>1</sub>+C<sub>2</sub> հանքաքար՝ 139.6 հազ. տ, ոսկի՝ 641.5 կգ, արծաթ՝ 51.2 տ, կապար՝ 1046.9տ, ցինկ՝ 1506,0տ: ՇՄԱԳ եզրակացությունը բացակայում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում: Եթե նույնիսկ ՇՄԱԳ-ն առկա է, ապա այն վաղուց օրենքի ուժով անվավեր է:

### Ազդակիր համայնքի մասին

#### ՀՀ Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնք և Զառիթափ բնակավայր

Խոշորացած Զառիթափ համայնքի կազմում ընդգրկված է 9 բնակավայր: Ըստ Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայքում տեղադրված «Զառիթափ համայնքի անձնագիր»<sup>3</sup> փաստաթղթի՝ համայնքի բնակչության թիվը 2018թ. դրությամբ կազմել է 4119 հոգի, համայնքի տնտեսությունների թիվը՝ 1110, ընտանեկան նպաստի ցուցակում գրանցված ընտանիքների թիվը՝ 130, կենսաթոշակառուների թիվը՝ 687: Համայնքի հողերի մակերեսը կազմում է 46834,85 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողերինը՝ 43139 հա: Համայնքի նախադպրոցական հաստատությունների թիվը 1-ն է, համայնքում գործում է 6 հանրակրթական դպրոց: Այդ փաստաթղթում որպես համայնքի խնդիրներ են նշվում ներհամայնքային փողոցների ասֆալտապատումը, Զառիթափ համայնքի Բարձրունի, Սերս, Զառիթափ, Արտավան և Մարտիրոս բնակավայրերի ոռոգման ցանցի ընդլայնումը:



Նկար 1. Զառիթափ համայնք

<sup>3</sup> [http://vdzor.mtad.am/u\\_files/file/vdzor/Hamaynqner/zaritap\\_andznagir.pdf](http://vdzor.mtad.am/u_files/file/vdzor/Hamaynqner/zaritap_andznagir.pdf)

Ըստ Զառիթափի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի՝ 2020 թ-ի դրությամբ համայնքի հիմնական բնակիչների թիվը 3582 է, որից 1726-ը՝ կանայք, 1856-ը՝ տղամարդիկ:

Համայնքում գործում է 534 աշակերտով 8 դպրոց:

Ունի 1 մանկապարտեզ՝ 90 սանով: Ունի 9 բուժկետ:

Զառիթափ բնակավայրի բնակչության թիվը կազմում է 1515 մարդ, որից կանայք՝ 757, տղամարդիկ՝ 758: Գյուղի 217 բնակիչ թոշակառու է, 59-ը՝ նպաստառու, գործազուրկ՝ 48, աշխատանք ունեցողները՝ 48: Գյուղն ունի 187 աշակերտի համար նախատեսված մեկ հիմնական դպրոց և մեկ մանկապարտեզ 60 սանի համար: Զառիթափ բնակավայրում գործում է առողջության պահպանության առաջնային կենտրոն: Ազգանակչությունը զբաղվում է հողագործությամբ, այգեգործությամբ, անասնապահությամբ և մեղվաբուծությամբ:

### **Ազդակիր համայնքի հիմնական խնդիրներն են՝**

Արտագաղթի բարձր մակարդակը, հեղեղատարների և ջրհեռացման համակարգերի վատ վիճակը, գործազրկության բարձր մակարդակը, աղքատության բարձր շեմը, միջհամայնքային և ներհամայնքային տրանսպորտի բացակայությունը:

Ըստ համայնքապետարանի աշխատակազմի ղեկավարի՝ համայնքի խնդիրներից են նաև Կեչուտի ջրամբարից ոռոգման առվի բաց հունով ոռոգման ջրով մատակարարման և ոռոգման ներքին ցանց չունենալու պատճառով դրա անհասանելությունը ոչ բոլոր տարածքներին, խմելու ջրի ոչ-բավարար որակը, դրա անհամաչափ բաշխումը գյուղի թաղամասերի միջև և ներքին ցանցի վթարայնությունը, արոտավայրերի պակասը, բնակչության եկամուտների սղությունը:

### **«Վարդանի զարթոնքը» ՄՊԸ-ի իրական սեփականատերերի մասին**

Ըստ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կայքի՝ «Վարդանի զարթոնքը» ՄՊԸ-ն գրանցվել է 24.08.2001 թվականին<sup>4</sup>: Որպես իրական սեփականատեր N1 է գրանցված ՀՀ քաղաքացի Հրաչյա Հովհաննիսյանը, ով 22.07.2014 թվականից ձեռք է բերել ընկերության բաժնեմասերի 40%-ը: Նա միաժամանակ Ընկերության տնօրենն է:

Որպես իրական սեփականատեր N2 է գրանցված ՀՀ քաղաքացի Արտաշես Կակոյանը, ով 22.07.2014 թվականից ձեռք է բերել Ընկերության բաժնեմասերի 20%-ը:

Որպես իրական սեփականատեր N3 է գրանցված ՀՀ քաղաքացի Սուրեն Այվազյանը, ով 22.07.2014 թվականից ձեռք է բերել Ընկերության բաժնեմասերի 40%-ը:

Իրական սեփականատերերի միջանկյալ ընկերություններ վերաբերյալ տվյալները հայտարարագրում բացակայում են:

<sup>4</sup> <https://www.e-register.am/am/companies/1303011/beneficiary.pdf>

## **2. «Վարդանի զարթոնք» ՄՊԸ-ի ստանձնած արտավորություններն՝ ըստ 27.09.2012թ. ՊՎ-239 ընդերքօգտագործման պայմանագրի**

### **2.1. Սոցիալական պարտավորություններ**

27.09.2012թ. ՊՎ-239 ընդերքօգտագործման պայմանագրում ազդակիր համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մասին դրույթներ ներառված չեն, բացի համայնքի սոցիալական ծրագրին մասնակցության ընդհանուր դրույթների: Այդ բացթողումները չեն ուղղվել անգամ 2015թ. մարտի 6-ին պայմանագրում կատարված փոփոխությունների գործընթացում:

#### **2.1.1 Համայնքի նկատմամբ ստանձնած պարտավորությունների փաստացի կատարողականը**

Տարիներ շարունակ գործունեություն չծավալելու, ինչպես նաև 27.09.2012թ. ՊՎ-239 ընդերքօգտագործման պայմանագրով սոցիալական պարտավորություն չստանձնելու պատճառով որևէ սոցիալական կամ բարեգործական աջակցություն չի ցուցաբերել համայնքին:

### **2.2. Բնապահպանական պարտավորություններ**

Ընդերքօգտագործման պայմանագրով Ընկերությունը պարտավորվել է՝

1. Ապահովել ընդերքի, մթնոլորտի, հողի, անտառների, ջրերի, ինչպես նաև շինությունների և այլ կառույցների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից:
2. Ապահովել բնության, պատմամշակութային հուշարձանների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից:
3. Ապահովել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությանը նախատեսված պայմանները:
4. Նախագծի և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի համաձայն՝ վերականգնել և բարելավել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասերը (ռեկուլտիվացիա), ինչպես նաև դրանք պիտանի դարձնել տնտեսության մեջ օգտագործման համար, կամ բերել անվտանգ վիճակի:
5. Ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը:

#### **2.2 Բնապահպանական պարտավորությունների փաստացի կատարողականը**

Ընկերությունը չի ապահովել ընդերքօգտագործման պայմանագրի պահանջները, մասնավորապես չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով

մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը. բնապահպանության նախարարությունը չի սահմանել մշտադիտարկման վճարներ:

### 2.3 Հանքի փակման ծրագրի իրականացման ֆինանսական երաշխիքների մասին

Ընդերքօգտագործման պայմանագրում չեն ամրագրվել հանքի փակման միջոցառումների և հանքի փակման ծրագրի իրականացման ֆինանսական երաշխիքներ, ինչը ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 22-ի N 437-Ն որոշման պահանջների խախտում է: Միաժամանակ, ընդերքօգտագործման հայտի քննարկման գործընթացում չեն պահանջվել հանքի փակման ծրագիրը, ինչը Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի գ) ենթակետի խախտում է:

### 3. Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում հրապարակված «Վարանի գարթոնքը» ԱՊԸ-ի ընդհանուր ֆինանսական հաշվետվությունում ներկայացված տվյալները<sup>5</sup>

Տվյալ	2016 թ.	2017 թ.	2018թ.
Ոսկի պարունակող հանքաքարի արդյունահանում, տ,	0	0	
Շահութահարկ, դրամ	0	0	0
Եկամտային հարկ, դրամ	Հշվրկ.՝ 197529 Վճր.՝ 197529	Հշ վրկ .՝ 184028 Վճր.՝ 184028	Հշ վրկ .՝ 171228 Վճր.՝ 172078
Ավելացված արժեքի հարկ, դրամ	0	0	0
Ակցիզային հարկ, դրամ	0	0	0
Ռոյալթի, դրամ	0	0	0
Բնօգտագործման վճար, դրամ	0	0	0
Բնապահպանական վճարներ, դրամ	0	0	0
Բնապահպանական վճարներ (մաքսային), դրամ	0	0	0
ՇԹ Պետտուրք, դրամ	Հշվրկ.՝ 1000000 Վճր.՝ 10430520	Հշվրկ.՝ 1000000 Վճր.՝ 19580314	Հշվրկ.՝ 1000000 Վճր.՝ 12249071
ՇՄՊ դրամագլուխ, դրամ	Բազային՝ 2616800 Հշվրկ.՝ 171100 Վճր.՝ 0	Բազային՝ 2626800 Հշվրկ.՝ 171100, Վճր.՝ 0	Բազային՝ 2626800. Հշվրկ.՝ 171100, Վճր.՝ 735000
Մշտադիտարկումների իրականացման վճար, դրամ	Չի սահմանվել	0	0

<sup>5</sup> <https://reports.eiti.am/hy/>

Գույքահարկ, դրամ	0	0	0
Հողի հարկ, դրամ	0	0	0
Վարձակալություն (Հողամաս), դրամ	0	0	0
Վարձակալություն (Անշարժ գույք)	0	0	0
Վարձակալություն (փոխադրամիջոց)	0	0	0
Տույժ	Հշվրկ. 2129480 Վճր.՝ 2129480 տարեկան պետական և տուրքը ուշ վճարելու համար	Հշվրկ.՝ 3904543 Վճր.՝ 3904543 տարեկան պետական և տուրքի ուշ վճարում	
Տուգանք	0		
Սոց.-տնտ. պարտավորություն (Զառիթափ)	0	0	0
Բարեգործական հատկացումներ (Զառիթափ)	0	0	0
Ոչ ֆինանսական օգնություն	0	0	0
Տուգանք, դրամ	0	0	0
Աշխատատեղեր, մարդ	1	1	1
Անհատույց օտարումներ	0	0	0

#### 4. Ընկերության և պետական մարմինների կողմից ԱՃԹՆ շրջանակներում ներկայացրած տարեկան հաշվետվությունների համեմատական վերլուծությունը 2016-2018թթ. կտրվածքով

Ընկերության և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացված հաշվետվությունների միջև տարբերություններ չկան:

Ընկերության և Բնապահպանության նախարարության (Ներկայումս Շրջակա միջավայրի նախարարություն) 2016-2018 թվականների հաշվետվությունների՝ «Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրում» և «Մշտադիտարկումների իրականացման վճար» բաժինների միջև չկան տարբերություններ:

2016 թվականի ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) և Ընկերության հաշվետվությունների միջև տարբերություններ չկան:

2017 թվականի ՀՀ ՊԵԿ-ի<sup>6</sup> և Ընկերության հաշվետվությունների «Ազնիվ, գունավոր, սև և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման)

<sup>6</sup> <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2017&state-body=3>

թույլտվության տրամադրման համար պետական տուրք» տողում գգալի տարբերություններ կան, մասնավորապես, ըստ Ընկերության հաշվետվության 2017 թվականին վճարվել է 19580314 դրամ, իսկ ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ 20585652 դրամ: Տարբերություններ կան նաև եկամտային հարկի մասով, ըստ ՊԵԿ-ի, 2017թ. վճարվել է 168846 դրամ եկամտահարկ, ըստ Ընկերության՝ 184028.0 դրամ: Ըստ ՊԵԿ-ի՝ հաշվարկել է 2363531 դրամի տույժ, վճարել 3712939 դրամ, ըստ Ընկերության՝ հաշվարկել և վճարել է 3904543 դրամի տույժ:

2018 թվականին, ըստ Ընկերության հաշվետվության, վճարել է 172078 դրամ եկամտահարկ, ըստ ՊԵԿ-ի՝ 156291 դրամ:<sup>7</sup>

Նույն թվականին, ըստ ՊԵԿ-ի, վճարել է 15000 պետ. տուրք<sup>8</sup>, ըստ Ընկերության՝ 12249071 դրամ:

## **5. «Վարդանի զարթոնքը» ՍՊԸ-ի կողմից 2016-2018 թվականներին Զառիթափ համայնքի բյուջեին կատարած վճարումների մասին**

Ըստ Ընկերության և ՀՀ ՏԿԵՆ-ի ԱՃԹՆ հաշվետվությունների՝

- 2016թ., 2017թ. և 2018թ. Զառիթափ համայնքին գույքահարկ չի վճարել:
- 2016թ., 2017թ. և 2018թ. Զառիթափ համայնքին չի վճարել հողի հարկ:
- Հողամասերի, փոխադրամիջոցների վարձավճարներ ոչ մի տարի չի կատարել:
- Ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորություններ ընդերքօգտագործման պայմանագրում չի նախատեսվել:
- Ընդերքօգտագործողի կողմից 2016-2018թթ. համայնքին կատարած բարեգործական հատկացումներ, նվիրատվություններ կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումներ՝ չի կատարել:

## **6. Ընկերության կողմից 2016 - 2018 թվականներին շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին, մշտադիտարկումների համար, բնապահպանական և բնօգտագործման վճարների, պետական այլ տուրքերի մասին**

1. Ընկերությունը 2016-2018թթ. արդյունահանում, իրացում, արտահանում չի իրականացրել:
2. Ըստ Ընկերության հաշվետվության՝ 2016-2018թթ. ազնիվ, գունավոր, սև և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար սահմանված 10,0 մլն. դրամ պետական տուրքը վճարել է ամեն տարի (10,0 մին դր.-2016թ. , 10,430 մլն. դր -2017թ., 19,58մլն. դր. -2018թ.):
3. Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի (բազային՝ 2616700,0 դրամ, տարեկան հաշվարկային՝ 171100, 171100, 0 դրամ) համալրում չի իրականացրել 2016 և 2017թթ., սակայն 2018թ-ին վճարել է 735000 դրամ:

---

<sup>7</sup> <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2018&state-body=3>,

<sup>8</sup> <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2018&state-body=3>



4. Մշտադիտարկումների իրականացման վճար չի սահմանվել ՀՀ բնապահպանության նախարարության կողմից, այդ տարիների համար ոչինչ չի վճարվել:
5. Բնապահպանական և բնօգտագործման վճարներ չի հաշվարկել և չի վճարել:

### **7. Բնապահպանական վճարների նպատակային օգտագործման, մասհանումների և ծրագրերի վերաբերյալ**

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն 2016թ-2019թթ. Ձառիթափի համայնքը որևէ սուբվենցիայի գումար չի ստացել, քանի որ «Վարդանի գարթոնքը» ՄՊԸ-ն մինչև 2019թ. ընդգրկված չի եղել օրենքի 1-ին հոդվածում նշված կազմակերպությունների ցանկում:

### **8. Համայնքային զարգացման ծրագրում Ընկերության ներգրավվածության մասին**

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայքում տեղադրված Ձառիթափի համայնքի 2017-2021թթ զարգացման ծրագրում<sup>9</sup> նախատեսվող 11 ծրագրերից որևէ մեկում չի նշվում «Վարդանի գարթոնքը» ՄՊԸ-ից ակնկալվող համաֆինանսավորման, կամ օժանդակություն ստանալու մասին:

### **9. Այցելությունների արդյունքում հարցումների վերլուծություն**

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն ազդակիր Ձառիթափի համայնքապետարանում և բնակչության շրջանում 2020 թվականի փետրվարին անցկացրեց հարցում՝ սոցիալական, շրջակա միջավայրի և առողջապահության հարցերի շուրջ՝ նպատակ ունենալով պարզել բնակչության իրազեկվածության մակարդակը, նրանց գնահատականները և կարիքները, ինչպես նաև նրանց դիրքորոշումը Սոֆի-բինայի ոսկու հանքավայրի շահագործման հարցերում, լսել նրանց առաջարկներն առկա բնապահպանական խնդիրների լուծման վերաբերյալ:

Հարցմանը մասնակցել է 9 անձ, որից 5 կին, 4 տղամարդ, այդ թվում՝ Ձառիթափի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը: Հարցման արդյունքների գերակշիռ մասն արտահայտված են սույն հաշվետվության նախորդ բաժիններում, իսկ մյուս մասի արդյունքների վերլուծությունը ներկայացվում է ստորև՝

- Ըստ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Շմավոն Ազատյանի՝ համայնքի բոլոր բնակավայրերի անվտանգությունը վտանգված է: Մասնավորապես, համայնքի 4 բնակավայրեր՝ Խնձորուտը, Նոր Աձնաբերդը, Սերսը և Բարձրունին սահմանամերձ են, հետևապես գտնվում են ռիսկային գոտում: Ըստ նրա՝ ռազմական առումով համայնքի անվտանգության երաշխավորը Վայքի գումարտակն է:
- Հետպատերազմական իրավիճակում հրատապ լուծում պահանջող խնդիրների լուծման համար հարցվածները, կարևորելով անվտանգության առումով բոլոր

<sup>9</sup> <http://vdzor.mtad.am/files/docs/24445.pdf>;

հարցերը, այնուամենայնիվ, նշեցին որ առաջնային են բավար քանակությամբ քաղաքացիական պաշտպանության կառույցների ստեղծումը, գործող ապաստարանները, նկուղները և այդ նպատակով կառուցված դահլիճները և տարածքները նորմալ վիճակի բերելը՝ դրանք հարմարեցնելով պաշտպանական կառույցներին ներկայացվող պահանջներին:

- Ըստ համայնքապետարանի ներկայացուցչի՝ բացառությամբ հանքահարդյունաբերության հեռանակարային են համայնքի զարգացման այլընտրանքային՝ գյուղատնտեսական, էկոլոգիապես մաքուր կուլտուրաների մշակումն և հումքի վերամշակման փոքր՝ պահածոների, չոր մրգերի, ուտելի կանաչեղենի արտադրամասերի հիմնումը, անասնապահության ընդլայնումը, ինչպես նաև էկոտուրիզմի զարգացումը: Իսկ համայնքում ժամանակակից առաջադեմ տեխնոլոգիաների ներդրմամբ գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտում են համայնքային բյուջեի ֆինանսական միջոցների սահմանափակությունը, համապատասխան մասնագետների և բավարար աշխատուժի և ոռոգման ջրի պակասը:
- «Վարդանի զարթոնքը» ՄՊԸ-ն համայնքային հողերի, գույքի և հողամասի վարձակալության պայմանագրեր չունի, հետևապես չի վճարում դրանց դիմաց սահմանվող վարձավճարները:
- «Վարդանի զարթոնքը» ՄՊԸ-ն համայնքին երբևէ որևէ բարեգործական աջակցություն չի ցուցաբերել:
- Ըստ հարցվածների՝ ընդերքօգտագործման պայմանագիր կնքելիս համայնքը չի ներգրավվել այդ աշխատանքներում:
- Հարցվածների մի մասը հանքավայրերի շահագործումից վտանգ չի տեսնում, քանի որ, ըստ նրանց, հանքավայրը գտնվում է համայնքի տարածքից ներքև: Իսկ հարցվածների զգալի մասն ընդհանրապես դեմ է հանքավայրերի շահագործմանը:
- Համայնքի բնակչության եկամուտներն, ըստ հարցման մասնակիցների, ձևավորում են հողագործությունից, գյուղատնտեսությունից, անասնապահությունից և մեղվաբուծությունից:

**Հարցված բնակիչները շրջակա միջավայրի պահպանության ոլորտում առաջարկում են՝**

- Համայնքում պարբերական աղբահանության կազմակերպում, օրինական աղբավայրի հիմնում
- Հանքարդյունահանող կազմակերպությունների կողմից շրջակա միջավայրի պահպանության համար սահմանված նորմերի և չափաքանակների պահպանում
- Հանքարդյունահանողների և հանքավայրերի շահագործման ազդեցությունը կրող ազդակիր համայնքների միջև փոխհամագործակցության մեխանիզմների ստեղծում
- Համայնքներին հանքարդյունահանող կազմակերպությունների նկատմամբ վերահսկողության լիազորությունների պատվիրակում:

**Հարցված բնակիչներն իրենց սոցիալական վիճակի բարելավմանն համար առաջարկում են՝**

- Համայնքի չգազաֆիկացված բնակավայրերի գազաֆիկացում
- Բնակավայրերում չրերի արտադրության և պահածոների արտադրամասերի կազմակերպում
- Գյուղատնտեսական մթերքի իրացման շուկայի բացում
- Ամբուլատոր բուժման կետի բացում
- Համայնքում գործող ներքին ջրամատակարարման ցանցերի վերանորոգում
- Բնակչության արտագաղթը կանխելու համար աշխատատեղերի ստեղծում
- Դպրոցի և մանկապարտեզի շենքերի վերանորոգում:

## 10. Եզրակացություն

1. Շահագործման թույլտվություն ստանալուց հետո Ընկերությունն արդյունահանման աշխատանքներ առ այսօր չի սկսել՝ չապահովելով Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքով սահմանվող ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը, խախտելով Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին 6-րդ մասի պահանջները:

2. Ընկերությունը բնապահպանական և բնօգտագործման հարկեր չի հաշվարկել և չի մուծել, հողի հարկ չի մուծել՝ խախտելով Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 69-րդ հոդվածի և ընդերքօգտագործման պայմանագրի պահանջները: Այսինքն, իր անգործության հետևանքով բացասական ազդեցություն է թողել ՀՀ պետական և համայնքային բյուջեի կանխատեսումների գործընթացի վրա:

3. Ընդերքօգտագործման պայմանագիր կնքելիս համայնքը չի ներգրավվել Ըկերության սոցիալական պատասխանատվության հարցերի քննարկման գործընթացին և չի արտահայտել իր դիրքորոշումը պայմանագրի կնքման ժամանակ:

4. Ընկերությունը ՀՀ Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի հետ չի կնքել հողի օգտագործման պայմանագիր և չունի հողի օգտագործման իրավունք:

5. 27.09.2012թ. ՊՎ-239 ընդերքօգտագործման պայմանագիրը կնքվել է Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 54-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի պահանջների խախտմամբ, այն չունի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափի և կատարման ժամկետների վերաբերյալ դրույթներ, ինչպես նաև պայմանագրում չեն ամրագրվել հանքի փակման միջոցառումների և հանքի փակման ծրագրի իրականացման ֆինանսական երաշխիքների մասին բաժինը, ինչը ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 22-ի N 437-Ն որոշման պահանջների խախտում է: Ընդերքօգտագործման հայտի քննարկման գործընթացում չի պահանջվել հանքի փակման ծրագիրը, ինչը Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի գ) ենթակետի խախտում է:

6. Ընկերությունը չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը:

7. Ընկերությունը չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը՝ խախտելով Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի և ընդերքօգտագործման պայմանագրի պահանջները: ՀՀ բնապահպանության

նախարարությունը Ընկերության համար մշտադիտարկումների վճար չի սահմանել, ինչը ՀՀ կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի «Օգտակար հանաձոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգը սահմանելու մասին» N 22-Ն որոշման պահանջների խախտում է:

8. Ընկերությունն իր գործունեության ընթացքում չի ապահովել աշխատանքների և իրագործվող ծրագրի թափանցիկությունն ազդակիր համայնքի և շահագրգիռ հասարակայնության նկատմամբ:

9. ԱՃԹՆ համակարգն ունի պատկան մարմինների և ընդերքօգտագործողների հաշվետվությունների հավաստիության և համադրելիության ճշգրտման խնդիր:

*Սույն հաշվետվությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները /կամ նյութի բովանդակությունը/ միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:*